

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 28**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության**

29.10.2018թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին**

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Ս.Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Դեմիրճյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Ադլոյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնայանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

**Օր ա կ ա ր գ ու մ՝**

1. Տարածքային կառավարման և զարգացման նախարարի մոտ մարզպետների մասնակցությամբ կայացած խորհրդակցության արձանագրության որոշման կատարման մասին:

/Ա.Ղուկասյան/

2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,  
գլխավոր քարտուղարի տեղակալ,  
ստորաբաժանումների ղեկավարներ/

3. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

## Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

### 1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Խաչատրյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել գործուղումների տրամադրման կարգի պահպանման նկատմամբ:

### 2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

ա) Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել առաջարկություններ Վանաձորի թիվ 27 դպրոցի տանիքի վերանորոգման վերաբերյալ:

բ) Մեկշաբաթյա ժամկետում կազմակերպել հանդիպում Լոռու մարզի շինարարական կազմակերպությունների տնօրենների մասնակցությամբ:

### 3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ա.Մատինյանին՝

Հանձնարարել հանրակրթական դպրոցների տնօրեններին ձեռնարկել միջոցներ շինարարական աշխատանքների իրականացման, ընթացիկ վերանորոգման նկատմամբ հսկողություն սահմանելու և տնտեսվարների աշխատանքները վերահսկելու ուղղությամբ:

### 4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Լ.Բերոյանին՝

Ներկայացնել առաջարկություններ Թումանյանի ՍԱՏԳ-ում ներքին աուդիտ անցկացնելու վերաբերյալ:

### 5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ա.Ադլոյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն կենսաթոշակային տարիքի հասած անձանց՝ Լոռու մարզպետարանի աշխատակիցների և մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների տնօրենների վերաբերյալ:

### 6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների բաժնի պետ Ա. Եղիազարյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն Լոռի Բերդ համայնքի պարտուսից դուրս մնացած երեխաների վերաբերյալ:

10/29/2018

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

